ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Նունուֆար Ալեքյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության ատոմային էներգետիկայի բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Սլովակիա, քաղաք Բրատիսլավա, 2023թ. նոյեմբերի 7-ից 11-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ԱՄՆ պետդեպարտամենտ, Սլովակիայի էկոնոմիկայի նախարարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն 2023թ. նոյեմբերի 7-ից 11-ը Բրատիսլավայում ԱՄՆ պետդեպարտամենտի և Սլովակիայի էկոնոմիկայի նախարարություն կողմից կազմակերպված «Phoenix Workshop and Launch Event» միջոցառմանը:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Փոքր մոդուլյար ռեակտորներով միջուկային տեղակայանքների կառուցման նպատակով իրականացվող նախապատրաստական աշխատանքների կատարում, դրանց տեխնիկատնտեսական հիմնավորման մշակմանը առնչվող հարցերի քննարկում, վերջիններիս վերաբերյալ միջազգային փորձի ներկայացում:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Միջոցառման շրջանակներում կայացել են աշխատանքային հանդիպումներ տարբեր կազմակերպությունների («EXCEL SERVICES CORPORATION», «PPAENERGO s.r.o.», «DEEP ISOLATION», «NUSCALE», «HOLTEC EUROPE» «SARGENT & LUNDY») և պետական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ:
   Հանդիպումների ընթացքում քննարկվել են ատոմային էներգետիկայի բնագավառում հնարավոր համագործակցության հարցերը, ներկայացվել է վերոնշյալ կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն:
   Հանդիպման ընթացում ներկայացվել է տարբեր երկների ծրագրերը՝ կապված փոքր մոդուլյար ռեակտորների հնարավոր տեղակայման, դրանցով աշխատող տեղակայքների կառուցման, շահագործման, շահագործումից դուրսբերման ինչպես նաև ատոմային էներգետիկայի բնագավառում համապատասխան գործունեության լիցենզաների ստացման, դրանց տրամադրման հետ կապված հարցեր:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   Հանդիպման ավարտին կազմակերպիչների և մասնակիցների կողմից շեշտվել է հետագայում ևս նմանատիպ միջոցառումների անցակացման կարևորությունը՝ հաշվի առնելով ատոմային էներգետիկայի բնագավառում հետագա զարգացումները:

9. **<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**

Ակնկալվում է, որ նմանատիպ հանդիպումների անցկացումը հնարավորություն կտա ավելի արդյունավետ իրականացնել ատոմային էներգետիկայի բնագավառի նախանշված ծրագրերը՝ կիրառելով բնագավառում առաջատար երկրների փորձը և ժամանակակից տեխնոլոգիաները:

ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի վարչության
Ատոմային էներգետիկայի բաժնի
գլխավոր մասնագետ

Նունուֆար Ալեքյան

14.11.2023թ.